ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

Իրավունքի ինստիտուտի տնօրեն՝

Մ.Ա. Քալաշյան

№ 1(6) «18» ապրիլի 2025 թ.

ՆԱԽԱԴԻՊԼՈՄԱՅԻՆ (ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ) ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 Իրավագիտություն

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.6 Իրավագիտություն

Ուսուցման ձև

(Առկա)

I. Ընդհանուր դրույթներ

Նախադիպլոմային (մասնագիտական) պրակտիկան հանդիսանում է բակալավրի կրթական ծրագրի բակալավրի աստիճանի հավակնորդների պատրաստման հիմնական կրթական ծրագրի պարտադիր բաժին (բաղկացուցիչ մասը) և ուղղված է ավարտական որակավորման աշխատանքների ավարտին:

Նախադիպլոմային պրակտիկան ընդգրկված է "գիտահետազոտական" բլոկում:

II. Նախադիպլոմային (մասնագիտական) պրակտիկայի նպատակը և խնդիրները

Նախադիպլոմային (մասնագիտական) պրակտիկայի անցկացման նպատակն է ուսումնառության ընթացքում ուսանողների ձեռք բերած տեսական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրապնդումն ու խորացումը, գիտավերլուծական մտածողության ձևավորումը:

Պրակտիկան ուղղված է ուսանողին հետագա մասնագիտական գործունեության նախապատրաստմանը, ներառյալ իրավական նորմերի կիրառման և տարբեր իրավական իրավիճակների լուծման գործնական հմտությունների ձևավորումը:

Նախադիպլոմային պրակտիկայի խնդիրներն՝

- Ինքնակազմակերպման և ինքնակրթության մեթոդների և հմտությունների ձեռքբերում և յուրացում՝ որպես ուսանողի պրակտիկ գործունեության հիմք
- Տեսական գիտելիքները գործնականում կիրառելու գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ առանցքային հմտությունների և կարողությունների ձևավորում
- Ուսանողների շրջանում հետազոտական և գործնական առաջադրանքներ դնելու հմտությունների զարգացում
- Ավարտական աշխատանքի մեջ հավաքագրված տեսական նյութի և պրակտիկ գործունեության ընթացքում ձեռք բերվածտվյալների և հմտությունների օրգանական սինթեզի ունակության ձևավորում

- Տեսական գիտելիքների ինքնուրույն կիրառում մասնագիտական գործունեության գործընթացում
- Գործնական հետազոտությունների արդյունքների մեկնաբանում և ձևակերպում
- Կիրառական գիտական խնդիրների բացահայտումը և դրանց արտացոլումը ավարտական աշխատանքում
- մասնագիտական գործունեության մեջ նորմատիվ իրավական ակտերի գրագետ կիրառման հմտությունների խորացում
- Իրավիճակի ճիշտ իրավական գնահատման հմտությունների խորացում:

III Նախադիպլոմային (մասնագիտական) պրակտիկայի
ընթացքում ձևավորվող որոլտային որակավորումները

Բակալավրի կրթական ծրագրի ուսանողների պրակտիկայի արդյունքում պետք է ձևավորվեն հետևյալ որոլտային որակավորումները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության «Իրավագիտություն» որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրերի (Բակալավրի կրթական մակարդակ), հաստատված ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հաստատելու մասին 2021 թվականի նոյեմբերի 30 թիվ 50-Լ հրամանի:

Իրավագիտության բակալավրի աստիճանի հավակնորդը նախադիպլոմային պրակտիկայի ավարտին պետք է տիրապետի հետևյալ գիտելիքների, հմտությունների և կարողությունների՝

- Իրավական համակարգի կառուցվածքի և գործառույթների, դրա և՛ քաղաքական ու տնտեսական համակարգերի փոխազդեցության, և՛ մարդու իրավունքների վերաբերյալ հիմնարար գիտելիք
- Իրավակիրառման (մասնավորապես՝ իրավաբանական փաստերի վերլուծության, իրավաբանական որակման, իրավական նորմերի և պայմանագրերի մեկնաբանման), իրավական կոլիզիաները լուծելու կանոնների և տեսությունների վերաբերյալ հիմնարար գիտելիք

- Իրավունքի հիմնական ճյուղերի (մասնավորապես՝ սահմանադրական իրավունքի, վարչական իրավունքի և վարչական դատավարության, քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության, աշխատանքային իրավունքի, քրեական իրավունքի և քրեականդատավարության, էկոլոգիականիրավունքի, միջազգայինհանրային իրավունքի, դրանց սկզբունքների, ինստիտուտների, նորմերի ծագումնաբանության և էության, այդ ինստիտուտների և նորմերի օրենսդրական ամրագրման և կիրառման գործընթացի վերաբերյալ հիմնարար և համակարգված գիտելիք
- Իրավական վեճերի լուծման և բանակցությունների վարման սկզբունքների ու տեսությունների վերաբերյալ հիմնարար գիտելիք
- Մասնագիտական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ հարակից ոլորտների, ինչպես նաև՝ մասնագիտական բարեվարքության (էթիկայի) կանոնների և կոռուպցիային հակազդման վերաբերյալ գիտելիք
- Կարող է կիրառել մասնագիտական գիտելիքներն առավել հաճախ հանդիպող իրավական խնդիրների լուծման համար
- Կարող է ինքնուրույն կազմել և մշակել իրավական փաստաթղթեր, տալ իրավաբանական եզրակացություններ, տրամադրել իրավաբանական խորհրդատվություն
- Կարող է իրավունքի մեկնաբանման կանոնների կիրառմամբ պարզաբանել իրավական նորմերը և պայմանագրերըԿարող է օրինական մեթոդներով որոնել և գտնել վերաբերելի դատական և իրավական այլ ակտեր կամ այլ տեղեկություններ, օգտագործել դրանք մասնագիտական ոլորտում խնդրի լուծման համար, ինչպես նաև՝ հետևել իրավական ակտերի փոփոխություններին
- Կարող է վերհանել իրավական խնդիրը, տարբերակել գործի լուծման համար էական փաստերը, որոշել կիրառելի իրավական նորմը և կիրառել փաստերի նկատմամբ, եզրահանգում անել գործի լուծման վերաբերյալ
- Կարող է արագ կողմնորոշվել իրավական խնդիրներ (այդ թվում՝ անկանխատեսելի) լուծելիս և դրանց վերաբերյալ ներկայացնել իր

փաստարկված դիրքորոշումը, այդ թվում՝ առաջ քաշելով հակափաստարկներ

- Կարող է իր գործունեության ընթացքում կիրառել ՏՀՏ-ներ և այլ մասնագիտական գործիքներ՝ իրավական խնդիրների լուծումն ապահովելու համար
- Կարող է հավաքել, մշակել և մեկնաբանել իրավական հիմնախնդիրներին վերաբերող քանակական և որակական տվյալներ՝ հիմնավորված դատողություններ անելու համար
- Կարող է հետևել մասնագիտական բարեվարքության (էթիկայի) կանոններին՝ պատասխանատվությամբ իրականացնելով իր մասնագիտական գործառույթները
- Կարող է դրսևորել քննական և փաստարկված վերլուծական մոտեցում՝ իրավական խնդիրները բացահայտելու և դրանց լուծման ուղիները մշակելու համար
- Կարող է մասնագիտական խնդիրները բացահայտելիս և լուծումներ առաջադրելիս ցուցաբերել նախաձեռնողականություն և ստեղծագործական մոտեցում
- Ունակ է՝ ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալել ու լիարժեք մասնագիտական գործունեություն
- Ունակ է՝ պարբերաբար ուսումնասիրելու օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան, մասնագիտական գրականությունը և ինտեգրվելու հարափոփոխ բազմամշակութային աշխատանքային միջավայրին
- Ունակ է՝ ուսումնառության և (կամ) աշխատանքի ընթացքում կատարելու առաջադրանքներ, ցուցաբերելու անհրաժեշտ ինքնուրույնություն և ստանձնելու պատասխանատվություն մասնագիտական որոշումներ կայացնելիս

IV Նախադիպլոմային (մասնագիտական) պրակտիկայի տեսակը և եղանակը

Նախադիպլոմային (մասնագիտական) պրակտիկան անցկացվում է "Իրավագիտություն" ուղղության բակալավրիատի չորրորդ կուրսում (8-րդ կիսամյակում), որն իրականացվում է պրոֆիլային կազմակերպություններում: Ուսանողներին

պրակտիկայի ուղեգրումը կատարվում է Համալսարանի և պրոֆիլային կազմակերպությանմիջև կնքված պայմանագրերի հիման վրա:

Նախադիպլոմային պրակտիկան ներառում է ուսանողների ինքնուրույն աշխատանքը կազմակերպության պրակտիկայի ղեկավարի ղեկավարությամբ:

Այն իրենից ներկայացնում է ավարտական աշխատանքի տեսական հայեցակարգի կատարելագործում, պրակտիկայի ղեկավարի օգնությամբ հայտնաբերված գործնական խնդիրների գիտական լուսաբանում և դրանց լուծման հնարավոր ուղիների առաջարկում; անհատական առաջադրանքների կատարում՝ հավաքվաքծ նյութի վերլուծություն, խնդրահարույց իրավիճակի գնահատում, հետազոտում:

Նախադիպլոմային պրակտիկայի անհատական առաջադրանքի թեման ձևակերպվում է ավարտական աշխատանքի թեմայի համաձայն: Նախադիպլոմային պրակտիկայի ընթացքում ուսանողները զարգացնում են իրենց գործնական հմտությունները:

Ուսանողների համար նախադիպլոմային պրակտիկայի անցկացումը պարտադիր է: Պրակտիկայի պարտքը հավասար է սովորական ակադեմիական պարտքի:

V. Նախադիպլոմային (մասնագիտական) պրակտիկայի տեղը բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքում

Նախադիպլոմային (մասնագիտական) պրակտիկան ուսումնական գործընթացի ամենակարևոր վերջին փուլն է, որն իրականացվում է ուսանողների կողմից տեսական ուսուցման ծրագրերի յուրացումից հետո և ուղղված է մասնագիտական հմտությունների և կարողությունների խորացմանը և կատարելագործմանը, ինչպես նաև մասնագիտական գործունեության փորձի ձեռքբերմանը մասնագիտական գործունեության ոլորտներում, որոնք ձեռք են բերվել մասնագիտական պրակտիկայի ընթացքում:

Ուսանողների նախադիպլոմային (մասնագիտական) պրակտիկայի տևողությունը 4 շաբաթ է և անցկացվում է մասնագիտացված կազմակերպություններում:

Պրակտիկայի մեկնարկից առաջ ուսանողները պետք է ծանոթանան պրակտիկայի նպատակներին և խնդիրներին, ինչպես նաև ստանան անհրաժեշտ ուսումնամեթոդական

փաստաթղթեր: Պրակտիկայի մեկնարկից անմիջապես առաջ պրակտիկայի պատասխանատուն խորհրդատվություն է անցկացնում դրա անցկացման կարգի վերաբերյալ: Նախադիպլոմային պրակտիկային թույլատրվում են միայն այն ուսանողները, ովքեր ամբողջությամբ ավարտել են ուսումնական պլանը և չունեն ակադեմիական պարտք:

VI. Նախադիպլոմային (մասնագիտական) պրակտիկայի անցկացման վայրը

Նախադիպլոմային (մասնագիտական) պրակտիկան իրականացվում է այն կազմակերպություններում, որոնց գործունեության պրոֆիլը համապատասխանում է կրթական ծրագրի բովանդակությանը և պահանջներին, որոնք ունեն որակյալ կադրեր՝ նախադիպլոմային (մասնագիտական) պրակտիկայի ղեկավարման համար, ինչպես նաև համապատասխան նյութատեխնիկական բազա:

Որպես նախադիպլոմային (մասնագիտական) պրակտիկայի Բազա սահմանված կազմակերպության հետ կնքվում է պայմանագիր Ռուս-Հայկական համալսարանի ուսանողների գործնական պատրաստության մասին՝ Ռուս-Հայկական համալսարանի ուսանողների գործնական պատրաստման կանոնակարգին համապատասխան (հաստատված է ՌՀՀ Գիտական Խորհրդի 2022 թվականի մայիսի 27-ի No. 658 որոշմամբ):

Ուսանողները, ովքեր համատեղում են ուսումը մասնագիտական աշխատանքային գործունեությանհետ, իրավունք ունեն անցնել նախադիպլոմային (մասնագիտական) պրակտիկա աշխատանքային գործունեության վայրում, պայմանով, որ նրանց կողմից իրականացվող մասնագիտական գործունեությունը համապատասխանում է պրակտիկայի բովանդակության պահանջներին, կրթական ծրագրի ուղղվածությանը և թույլ է տալիս կատարել պրակտիկայի ղեկավարի անհատական առաջադրանքը:

VII. Պրակտիկայի արդյունքների հիմանվրա ատեստավորման ձև

Պրակտիկայի օրագրում պետք է արտացոլվեն պրակտիկայի ընթացքում ուսումնասիրված բոլոր հարցերը, ներկայացվեն անհատական առաջադրանքի թեմային համապատասխան կատարված աշխատանքները. կատարված աշխատանքի

նկարագրությունը. վիճահարույց, բարդ իրավական հարցերի ներկայացում և դրանց լուծում:

Պրակտիկայի ավարտից հետո ուսանողը սահմանված ժամկետում պետք է համապատասխան ամբիոն հանձնի պրակտիկայի օրագիր, որը պարունակում է պրակտիկայի մասին հաշվետվություն և պրակտիկայի ղեկավարի բնութագիրը:

Պաշտպանությանը թույլատրվում են միանայն ուսանողները, ովքեր կատարել են պրակտիկայի ծրագիրը և օրագիրեն կազմել պահանջներին համապատասխան: Պրակտիկայի հաշվետվությունների պաշտպանությունն իրականացվում է համապատասխան ամբիոնում սահմանված ժամկետում:

Պրակտիկայի ծրագիրը չկատարած և զեկույցը պաշտպանելիս անբավարար գնահատական ստացած ուսանողները համարվում են ակադեմիական պարտք ունեցող: Հարգելի պատճառների առկայության դեպքում հնարավոր է անհատական կարգով հետաձգել պրակտիկայի և հաշվետվությունների պաշտպանության ժամկետները:

VIII. Գործնականում կիրառվող կրթական, գիտահետազոտական և գիտաարտադրական տեխնոլոգիաներ

Նախադիպլոմային (մասնագիտական) պրակտիկա անցնելիս օգտագործվում են ավանդական գիտական տեխնոլոգիաներ, ինչպես նաև իրավագիտության մեջ գիտական և գործնական հետազոտությունների անցկացման հատուկ մեթոդներ (ֆորմալ/ձևական իրավական, սոցիոլոգիական, վիճակագրական և այլն):

Պրակտիկայի ընթացքում օգտագործվում են նաև "Arlis", "DATALEX, E-DRAFT տեղեկատու և իրավական համակարգերը և այլն:

IX. Պրակտակայի ուսումնամեթոդական ապահովում

Պրակտիկայի օրագիրը ուսանողի հաշվետվական փաստաթուղթն է պրակտիկայի ամբողջ ժամանակահատվածի համար:

Օրագիրը պետք է պատշաճ կերպով կազմված լինի, ունենա նշումներ

պրակտիկայի սկզբի և ավարտի մասինё կազմակերպության կողմից պրակտիկայի ղեկավարի ստորագրությամբ և համապատասխան կազմակերպության (հաստատության) կնիքով:

Օրագրում ամեն շաբաթ գրանցվում են տեղեկություններ ուսանողի կատարած գործողությունների և առաջադրանքների, նրա ուսումնասիրած փաստաթղթերի, գիտական միջոցառումներին ուսանողի մասնակցության մասին:

Շաբաթական պրակտիկայի ղեկավարը համալսարանից և պրոֆիլային կազմակերպությունից ստուգում է ուսանողի օրագիրը և գիտելիքները և պրակտիկայի ավարտին կազմում է բնութագիր պրակտիկային կատմամբ վերաբերմունքի, աշխատանքային կարգապահության պահպանման, ձեռք բերված գիտելիքների և հմտությունների: